

## Աղօրիք

Է՛յ աղօրիք, դարձի՛ր, դարձի՛ր,  
Նստած կանանչ խորը ձորին.  
Աղաղակե՛ երգըդ խորին  
Դեպի լուսնակն արծաթածիր:

Դուն դողդոջուն տընակ մըն ես  
Ալիւրոտած պատերով՝ ուր  
Կարծես կու լան հիագարհուր,  
Ջըրանոյշներ հագած բեհեզ:

Միշտ կը հսկէ մէջըդ արթուն  
Աղօրեպանը ճեփճերմակ.  
Եւ ըստ պէտքի՝ մեղմ կամ արագ,  
կը լարէ սի՛րտըդ բաբախուն:

Է՛յ աղօրիք, բանտուած մրրիկ  
Ծառերուն մէջ . աղա՛, աղա՛,  
Փըրփուր խըմե՛, ալիւր տեղա՛ .  
Քարէ կուրծքէդ տեղա՛ բարիք:

Կեցո՛ւր գետակն ընթացքին մէջ  
Իր ծըփանուտ բաշէն բոնած:  
Ջրվեժն ահեղ երգի փոխած  
Պոռթկայ վիհէն վար գահավեժ:

Սայլե՛ր, սայլե՛ր անծայրածիր  
Ջաղացքներուն ճերմակ ճամբէն  
Աղօնն իրենց քեզ կը բերեն...  
Է՛յ աղօրիք, դարձի՛ր, դարձի՛ր:

Յորեններ թող ալիւր ըլլան  
Պորտին մէջ ժիր երկաններուն՝  
Որոնք բոնուած տենդով մ՛անհուն  
Կը մըռըլտան ու հիռ կու գան:

Յորեններ թող ըլլան փոշի  
Զիրար գրկող քարերուն տակ.  
Զիրար կրծող ժայռերուն տակ

Ցորեններ թող ըլլան նաշիհ:

Մինչեւ լեցուին շարան շարան  
Պարկերն, ու վե՛ր կանգնին նորէն.  
Եւ սայլերն ալ ճռուողէլէն  
Ոսկին թողած ` լոյսով դառնան:

**Դանիել Վարուժան**